Թեսթ 20

Վախթանգ Անանյան

Քարակոփ կածան

Զանգեզուրի Քարահունջ գյուղի դիմաց, ժայռերով ու թփուտներով պատած մի լանջ կա, որ նայում է Վարարակ գետին: Թեև արդեն մտել էինք ձմեռը, բայց արևահայաց այդ լանջը մերկացել էր առաջին ձյունից և այնպես ջերմ ու հյուրընկալ էր իր դեղնասաղարթ թփերով, նրանց վրա կարմրին տվող հատապտուղներով և ժայռերի վրա կչկչացող կաքավներով, որ ես տափարակից եկա այդ լանջը և առաջ գնացի նրա լայնքով:

Որսս հաջող չէր, բայց բավականություն էի ստանում ծառերի վրայից և թափված տերևների միջից վայրի **պտուղներ** գտնելով: Մի ձորակում էլ տերևների տակ ընկույզներ գտա, մի քանիսը ծակ ու դատարկ (սկյուռներն էին դատարկել), կային և անարատ մնացածներ: Վեր նայեցի. ժայռի տակ մի ընկուզենի է կանգնած՝ պառաված ճյուղերը կախ: Նրա մոտ նռան ցածրիկ մի ծառ կա, երկու սերկևիլենի:

Որտեղի՞ց են այս ընտանի ծառերը՝ բնակավայրերից հեռու ընկած այս ժայռերում:

Հետաքրքրությունից մղված վեր բարձրացա: Այդ ժայռերը կանգնած էին քարերից **մաքրված** մի գոգավորության վրա: Այստեղ երևում էին մարդու աշխատանքի հետքերը, ժայռի տակից դեպի ծառերը հանած մի փոքրիկ առվի ցամաքած հուն, իրար զուգահեռ ձգված թմբերի երեք շարք, որոնց վրա իր ժամանակին լոբի են ցանել, այստեղ-այնտեղ ընկած մի քանի ցցեր, մի կոտրած բահ, օջախում մնացած մոխիր, ածուխ, կիսաայրված փայտերի կտորներ և մի սալաքար, որի վրա բլիթներ է թխել այդտեղի երբեմնի բնակիչը:

Մեծ ջանքերով բնությունից պոկած այդ հողակտորի տերը, որպեսզի պահպանի իր մշակույթը, ժայռի պատին բրիչով մի խորշ է փորել, որի մեջ քնել է սրթսրթալով կամ պատսպարվել անձրևից: Մի այլ խորշ իր **տխուր** օրերի միակ ընկերոջ՝ շան բույն է: Վերևի խորշում խոտ է դրել որ հավաքել է ժայռերի արանքներից:

Մի վերմակի տարածություն բռնող իր այդ ողորմելի հողակտորին ապավինած, ապրել է այդտեղ նա գարնանից մինչև ուշ աշուն և որպեսզի իր քրտինքը բերք տա, ժայռի տակ մի ավազան է փորել, որի մեջ առաստաղից կաթել է գարնան ձնհալից

առաջացած այն ջուրը, որ աստիճանաբար ծծվում է փուխր ժայռի մեջ: Կաթիլ առ կաթիլ հավաքել է այդ ջուրը և նրանով **ոռոգել** իր մի հատիկ ընկուզենին, մի զույգ սերկևիլի ծառը, նռնենին, լոբու թմբերը:

Մենատնտեսի ողորմե՛լի, խղճո՛ւկ կյանք. . . Պատկերացնում եմ, ի՛նչ մռայլ ու ահավոր գիշերներ է անցկացրել շեներից ու մարդկանցից կտրված այդ չարքաշ հողագործը. . .

Աչքը Վարարակի խավար ձորին, ականջը ժայռերից եկող խորհրդավոր ու ահալի ձայներին, թախիծը հոգուն չոքած. . . Այնքա՛ն այդպիսի քարակոփ կացարաններ կան Զանգեզուրի ժայռերում: Կացարաններ, ուր պատսպարվել են կարիքից ու չար մարդուց հալածված շինականները, մեր անբախտ պապերը. . .

1. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառ: Դո՛ւրս գրիր այդ բառերը՝ լացնելով բաց թողած տառերը:

   Առաջին մարդուց

   Բարձրացա երբեմնի

2. Ի՞նչ է նշանակում **մենատնտես** բառը:
   Տնտեսությունը անհատական կերպով վարող և գյուղատնտեսական արտելի անդամ չհանդիսացող գյուղացի:
3. Գրի՛ր տեքստում թավ գրված բառերի հոմանիշները:
   պատած

4. Օտար բառերը փոխարինի՛ր հայերեն համարժեքներով.

ա/զարաժ ավտոտնակ

բ/դաչա ամառանոց

գ/մայկա շապիկ

դ/սումկա պայուսակ

5. Ո՞ր տարբերակում է ճիշտ «ջրի գին» դարձվածքի բացատրությունը.

ա/ շատ քաղցր

բ/ շատ թանկ

գ/ շատ էժան

դ/ շատ ջրիկ

6. Տեքստից դո՛ւրս գրիր երկուական պարզ և բարդ բառ

աշուն հողագործ

ավազան կիսաայրված

7. Տեքստի ըդգծված հատվածներից դո՛ւրս գրիր երկուական գոյական ու ածական:

աչք խավար

ականջ խորհրդավոր

8. Տրված նախադասության մեջ գտի'ր ենթական և ստորոգյալը:

Այնտեղ երևում էին մարդու աշխատանքի հետքերը:

ենթակա աշխատանքի

ստորոգյալ հետքերը

9. Տեքստից դո՛ւրս գրիր մեկ բացականչական նախադասություն:

Մենատնտեսի ողորմե՛լի, խղճո՛ւկ կյանք. . . Պատկերացնում եմ, ի՛նչ մռայլ ու ահավոր գիշերներ է անցկացրել շեներից ու մարդկանցից կտրված այդ չարքաշ հողագործը. . .

10. Կետադրիր տրված նախադասությունը՝ տեքստում կետադրված չէ:

Վերևի խորշում խոտ է դրել , որ հավաքել է ժայռերի արանքներից:

11. Ի՞նչ զարմացրեց որսորդին.

ա/որսը հաջող չէր

բ/վայրի պտուղներ գտնելը

գ/քարանձավներից հեռու ընկած ժայռերում ընտանի ծառեր տեսնելը

դ/ոռոգման համար կաթիլ-կաթիլ հավաքած ջուրը

12. Նկարագրի՛ր այդ փոքրիկ հողակտորին ապավինած շինականին:
նա շատ աշխատասեր էր և նա կամքի ուշ ուներ: Նա շատ չարաքաջ հողագործ էր:

13.Ինչե՞ր տեսավ որսորդը, երբ բարձրացավ գոգավորության վրա:

ա. ծառերի վրայից և թափված տերևների միջից վայրի **պտուղներ** գտնելը

բ. մի կոտրած բահ

գ. օջախում մնացած մոխիր

դ. ածուխ

14.Տեքսից դուրս գրի՛ր այն նախադասությունը, որում խոսվում է շան մասին:
Մի վերմակի տարածություն բռնող իր այդ ողորմելի հողակտորին ապավինած, ապրել է այդտեղ նա գարնանից մինչև ուշ աշուն և որպեսզի իր քրտինքը բերք տա:

15. Այլ վերնագրիր մտածիր պատմվածքի համար:

Աշխատասեր այգեպանը: